

Արձանագրություն №4/2014-2015

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 70-ը (յոթանասուն):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում:** (Ջեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
2. **Հաղորդում Երևանի պետական համալսարանի կազմակերպչական կարգավիճակի փոփոխության խնդրի մասին** (զեկ.՝ ռեկտոր Ա. Ն. Սիմոնյան)
3. **ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կատարման մասին** (զեկ.՝ ռեկտոր Ա. Ն. Սիմոնյան):
4. **ԵՊՀ-ում <<Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 ուստարվա համալիր միջոցառումների>> կատարման արդյունքների մասին** (զեկ.՝ ռեկտոր Ա. Ն. Սիմոնյան):
5. **Երևանի պետական համալսարանի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին** (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):
6. **Երևանի պետական համալսարանի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին** (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):
7. **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2013-14 ուստարվա գործունեության մասին** (զեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան)

8. Ընթացիկ հարցեր

9. 8.1 Այլ հիմնարկներում կատարվող ատենախոսությունների թեմաները ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդներում հաստատելու և կատարված աշխատանքի եզրակացությունը գրելու համար վարձավճարի չափ սահմանելու մասին: (զեկ. պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին. – Պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու մասին: Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը

ներկայացրեցին նաև պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Մանուկյան Արմենակ Սարիբեկի	Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ
2.	Վարդանյան Թրահել Գերասիմի	Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ
3.	Ապրեսյան Մարգարիտա Հրանտի	Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Մովսիսյան Հարություն Իշխանի	Օգտակար հանաճոների որոնման և հետախուզման ամբ. ասիստենտ`
2.	Մամվելյան Մելանյա Աշոտի	Օրգանական քիմիայի ամբ. ասիստենտ
3.	Մայսուրյան Հասմիկ Արամայիսի	Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի ասիստենտ
4.	Ալավերդյան Դավիթ Հրայրի	Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի ասիստենտ
5.	Զաքոյան Լիլիթ Մյասնիկի	Անգլերենի թիվ 1 ամբ. ասիստենտ
6.	Մկրտչյան Նելլի Նորիկի	Ընդհանուր լեզվաբանության ամբ. ասիստենտ
7.	Հովհաննիսյան Հասմիկ Ռազմիկի	Անգլիական բանասիրության ամբ. ասիստենտ
8.	Եթիմյան Նարինե Գագիկի	Անգլիական բանասիրության ամբ. ասիստենտ
9.	Էլոյան Ալիս Ժիրայրի	արաբագիտության ամբիոնի ասիստենտ
10.	Պապոյան Աննա Կլիմենտի	Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ
11.	Հարությունյան Լուսինե Ռոմիկի	Էկոլոգիական քիմիայի ամբիոնի ասիստենտ
12.	Մարգարյան Վարդուհի Գուրգենի	Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի ասիստենտ

13	Բաբաջանյան Արսեն Ժորայի	ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի ասիստենտ
14	Մկրտչյան Լիլիթ Սերյոժայի	Համաշխարհային պատմության ամբիոնի ասիստենտ
15	Եղիազարյան Արման Սամվելի	Սփյուռքագիտության ամբիոնի վարիչ

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Հարությունյան Վլադիմիր (նախագահ)
2. Ավետիսյան Յուրի
3. Հավհաննիսյան Արշալույս
4. Մարտիրոսյան Նարինե
5. Թորոսյան Դավիթ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 70 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Հարությունյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Մանուկյան Արմենակ Սարիբեկի	69	1	0
2.	Վարդանյան Թրահել Գերասիմի	69	1	0
3.	Ապրեսյան Մարգարիտա Հրանտի	67	3	0
4.	Մովսիսյան Հարություն Իշխանի	70	0	0
5.	Սամվելյան Մելանյա Աշոտի	69	1	0
6.	Մայսուրյան Հասմիկ Արամայիսի	68	2	0
7.	Ալավերդյան Դավիթ Հրայրի	69	1	0
8.	Զաքոյան Լիլիթ Մյասնիկի	69	1	0
9.	Մկրտչյան Նելլի Նորիկի	70	0	0
10.	Հովհաննիսյան Հասմիկ Ռազմիկի	69	1	0
11.	Եթիմյան Նարինե Գագիկի	70	0	0
12.	Էլոյան Ալիս Ժիրայրի	69	1	0
13.	Պապոյան Աննա Կլիմենտի	70	0	0
14.	Հարությունյան Լուսինե Ռոմիկի	70	0	0
15.	Մարգարյան Վարդուհի Գուրգենի	70	0	0
16.	Բաբաջանյան Արսեն Ժորայի	70	0	0
17.	Մկրտչյան Լիլիթ Սերյոժայի	70	0	0
18.	Եղիազարյան Արման Սամվելի	70	0	0

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

2. **Լսեցին.** - **Հաղորդում Երևանի պետական համալսարանի կազմակերպչական կարգավիճակի փոփոխության խնդրի մասին:** Ռեկտոր Ա. Միմոնյանն իր ելույթում մասնավորապես նշեց, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ՊՈԱԿ-ի կարգավիճակը մի շարք բարդությունների ու դժվարությունների տեղիք էր տալիս՝ խոչընդոտելով բուհերի կազմակերպչական ու ֆինանսական ինքնավարության տարրերի իրականացմանը: Բուհերի կազմակերպչական կարգավիճակի փոփոխության մասին հարցը վաղուց է գտնվել ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստերի օրակարգում, և Ագրարային ու Ճարտարապետաշինարարական համալսարանների հաջողված փորձը՝ հիմնադրամի կարգավիճակի անցնելով, հիմք է տվել, որպեսզի ԵՊՀ-ն ևս ձեռք բերի նշված կարգավիճակը: Ա. Միմոնյանը կանգ առավ այն առավելությունների վրա, որն ընձեռում է հիմնադրամի կարգավիճակը, մասնավորապես նշելով, որ կարևոր էր <<Երևանի պետական համալսարան>> բառակապակցության ամբողջական պահպանումը:

Որոշեցին. – Ա. Միմոնյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. **ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի մասին:** Ռեկտոր Ա. Շ. Միմոնյանը ընդհանուր գծերով ներկայացրեց ռազմավարական ծրագրի 2010-14 թթ. գործողությունների կատարողականը՝ անդրադառնալով հետևյալ խնդիրներին. 1/ կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում, 2/տնտեսական և ենթակառուցվածքների զարգացում, 3/ Ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների գործարկման շարունակում, 4/ հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման ապահովում և հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույնս ներգրավում, 5/ դասախոսական համակարգի համալրում և բարելավում և այլն:

Որոշեցին.-

1. Տալ հավանություն ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականին և ընդունել կատարողականի մասին զեկույցն ի գիտություն:
2. Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև՝ ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականը հաստատելու միջնորդությամբ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4. **Լսեցին.** - **ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարման մասին:** Ռեկտոր Ա. Շ. Միմոնյանը ներկայացրեց միջոցառումների ծրագրի՝ 2013-2014թթ. նախատեսված գործողությունների կատարողականը՝ կենտրոնանալով հետևյալ խնդիրների վրա. 1/ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողովի աշխատանքների շարունակումն ու բարելավումը, 2/ համալսարանական լրատվամիջոցներում երևույթին առնչվող նյութերի հրապարակումը, 3/ ուսանող-դասախոս երկկողմ պատշաճ շփումների մշակույթի արմատավորումը և այլն:

Որոշեցին. –

1. Տալ հավանություն Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի՝ 2012-2013 թթ. նախատեսված

գործողությունների կատարողականին և ընդունել կատարողականի մասին զեկույցն ի գիտություն:

2. Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև՝ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի՝ 2013-2014 թթ. նախատեսված գործողությունների կատարողականը հաստատելու միջնորդությամբ:

5. **Լսեցին.** - **Երևանի պետական համալսարանի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականը (հունվար-նոյեմբեր) հաստատելու մասին:** Գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը ըստ հոդվածների ներկայացրեց կատարողականը, որը նախապես տրամադրվել էր գիտխորհրդի անդամներին:

Արտահայտվեցին. - ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը:

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.** - **Երևանի պետական համալսարանի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին:** Գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը ներկայացրեց նախահաշիվն ըստ հոդվածների:

Արտահայտվեցին. - Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը:

Որոշեցին. -

1. Տալ հավանություն Երևանի պետական համալսարանի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծին:
2. Երևանի պետական համալսարանի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը ներկայացնել ԵՊՀ խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

Լսեցին. - **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2013-2014 ուս. տարվա գործունեության մասին:** Մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանն իր ելույթում մասնավորապես նշեց հետևյալը. 2013-14 ուստարում մասնաճյուղում իրականացվել են առկա ուսուցման 10 բակալավրական և 1 մագիստրոսական, հեռակա ուսուցման 7 բակալավրական կրթական ծրագրեր: Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան իրականացվել է մասնագիտությունների ճշգրտում: Առաջնորդվելով ԵՊՀ մեթոդական ուղենիշներով՝ ֆակուլտետներում վերանայվել և բարելավվել են, իսկ նոր մասնագիտությունների համար կազմվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերը, լրամշակվել են ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը»:

Կարևորելով իրականացվող կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը՝ իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ հարցումների և հանդիպումների միջոցով: 2013-14 ուստարում մասնաճյուղի առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների գծով բակալավրիատ ընդունվել է 205 ուսանող (39-ը՝ անվճար, 166-ը՝ վճարովի), մագիստրատուրա՝ 4 (2-ը՝ անվճար, 2-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով բակալավրիատ ընդունվել է 190 դիմորդ: Նշենք, որ առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 27-ով գերազանցում է նախորդ ուստարվա ընդունելությանը:

Որոշեցին. -

1. Հավանություն տալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2013-2014 ուստարվա գործունեությանը:

Լսեցին. – Ընթացիկ հարցեր:

Լսեցին. - Այլ հիմնարկներում կատարվող ատենախոսությունների թեմաները Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների գիտական խորհուրդներում հաստատելու և կատարված աշխատանքի եզրակացությունը գրելու համար վարձավճարի չափ սահմանելու մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը ներկայացրեց առաջարկությունները նշված վարձավճարների չափերի վերաբերյալ:

Որոշեցին. – 1. Այլ հիմնարկներում կատարվող ատենախոսությունների թեմաները ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդներում հաստատելու համար վարձավճարի չափ սահմանել 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամը:

2. Նախկինում թեման հաստատված լինելու դեպքում նախապաշտպանությունը ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդներում կազմակերպելու համար վարձավճարի չափ սահմանել 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամը:

3. Կատարված թեմայի եզրակացությունը գրելու համար վարձավճարի չափ սահմանել 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամը:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Ն. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

15.12.2014թ.